

ոալ կը բերէ նաեւ Լիրանիոս, հաւանական է կարծել թէ Պիտոյից Գիրքը նոյն աղբիւրէն առած է հատուածս, ուստի անկախ թէ ոնի հայերէն թարգմանութենէն:

17. «Իրողենէս տեսեալ զհամբալի ի շան տանէ քարինս արտաքս ընկենլով. Դադարեա, աւէ, պատանեակ, զուցէ չգիտելով հարցես զհայր»:

Διογένης ὁ Κυνικός φιλόσοφος, ἰδὼν μετράχιον ἐκ μοιχοῦ λίθου βάλλον εἰς ἀγοράν, παῦσαι, ἦφθη, παιδίον, μὴ ἀγνοοῦν παισης, τον πατέρα (209—210):

18. «Անտիսթենէս որ էր Ատտիկեցի, երթեալ յԱթէնս եւ հարցեալ. Ուստի՞. Ի Ղալիեզոմեայ ի կանանոցէն, աւէր, յառնանոցն զար»:

Ἀντισθένην Ἀττικόν γε ὄντα παραγενόμενον Ἀθήνηθεν εἰς Λακεδαίμονα, ἐκ τῆς γυναικωνίτιδος λέγειν εἰς τὴν ἀνδρωνίτιν ἐπιέναι (215):

Հատուածս ծանօթ է նաեւ Նոր Հայկ. Բազմաբնի, այս անգամ «Ոսկեխորիկ» է. տե՛ս Առնանոց բառին տակ:

Յոյն բնագիրը եղծուած, աղաւաղուած է. ուղղելու է ըստ հայոցն: Համեմատէ առ այս Նիկողայոս Միլոսացւոյ օրինակը, ուր խօսքը Դիոգենի բերանը դրուած է եւ «առնանոց» ներկայացուած Ղալիեզոմեայի, իսկ Աթէնք «Կանանոց». կ'ըսուի՝

Διογένης ἐκ Λακεδαίμονος εἰς Ἀθήνας ἰὼν, πύθεν ποῖ βαδίξεις ἐρομένου τινός, ἐκ τῆς ἀνδρωνίτιδος ἐπὶ τὴν γυναικωνίτιν εἶπεν (275):

= Իրողենէս ի Ղալիեզոմեայ եկեալ յԱթէնս, հարցաւ յունեմնէ. Ուստի՞ եւ յո՞ երթաս: Յառնանոցէ անտի, աւէ, ի կանանոց անդր»:

Նկատմամբ Առնանոց եւ կանանոց բառերու գործածութեան համեմատէ Փիլոնի հետեւեալ տեղեւորները. «Թոյ հասարակ պարկեշտանոցս այս... կրկին գաւիթ է. մին յառնանոցն եւ միւսն ի կանանոցն զատուցեալ եւ որոշեալ» (Յղ. վարուց կենաց տեսականի, էջ 14, տպ. Վենետիկ 1892): Իսկ Յղ. լինելութեան. Դ. 15 (էջ 256, տպ. Վենետիկ 1826) կը գրէ Փիլոն. «Հոգւոյ իբր տան, է որ առնանոց է եւ է որ խորպօնիս. արդ առնանոցն վայր է, որում գէպ եղև բնակել արու խորհուրդք... խորպօնիս, տեղի է, յորում շրջին բնակել բարք կանացիք»: Այս եւ նման

բառեր կարող են կուսան ծառայել հասնելու թարգմանչին նոյնութեան:

19. «Պիտոսակոս հարցեալ էթէ ծածկի՞ ոք յաստուածոց վատթար ինչ գործելով. աւսաց. Եւ ոչ ընդ միս ինչ անելով»:

Πιταχός ὁ Μιτυληναῖος ἐρωτηθεὶς, εἰ λαμβάνει τις τοὺς θεοὺς φαῦλόν τι ποιῶν; εἶπεν οὐδ', οὐδὲ διανοοῦμενος (203, 211):

Թէ ոնի Նախարարութեանց հայերէն թարգմանութեանս մասին թող բաւական համարուին տողերս իբրեւ նախապատրաստական տեղեկութիւններ: Մեր վաւիաքն է հայերէն բնագիրը ամբողջութեամբ հրատարակուած տեսնել. բնագիրն պատրաստութիւնը սիրով պիտի ուղէինք առնել յանձն, էթէ Պորհ. Հայաստանի Լուսօղորդը հաճէր արամաղրել մեզի օրինակութիւնը:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՀԱՅԵՐԸ ՄԱՐԳԱՐԱՅԻՆ ԳՐԱՅԻՆ ԳՐԱՆՈՒՄՆԵՐԸ

Ժողովուրդի մը ցեղային ծագումը լուսարանելու համար անհրաժեշտ հարկաւոր է ուսումնասիրել անոր մարդաբանութիւնը: Առ հասարակ աւելի ծանրակշուութիւն կ'ընծայուի անոր լեզուաբանական տեսակէտին, եւ թերեւս շատ իրաւամբ, բայց պէտք է մոռնալ, որ լեզուաբանութիւնը պիտի չկարենար երբեք լրացնել մարդաբանական տուեալներու պակասը. մանաւանդ որ, էթէ միայն լեզուաբանութեան ջանք լոյս տար մեր քայլերուն հնուութեան այդ միջին բաւիղներու մէջ՝ յաճախ շատ դիւրաւ սխալ ուղիներէ պիտի առաջնորդուէինք:

Պատմական իրողութիւն է թէ կան ժողովուրդներ, որոնք ժամանակի ընթացքին կորսնցուցած են իրենց լեզուն եւ նորեկ մ'ընդգրկած, մինչ ուրիշներ զեւ այդ փոփոխութեան փուլերը կ'ապրին: Գեղեցիկ ապացոյց է ստոր Ֆրանսայի հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան ծայրագաւառներու Փրանսախօս բնակիչները, որոնք մոռցած են այլ եւս իրենց բնատանական լեզուն. ստոր հակառակ Մեծն Բրիտանիոյ արեւմտեան նահանգներու բնակիչները կորսնցուցած են կեղտերէնն ու կը

խօսին անգլիերէն. աշխարհագրական անունները սակայն զեւ կը պահեն իբր ծագման ապացոյց անցեալի կտակը<sup>1</sup>: Ջախջախիչ է բուլգար ժողովուրդի օրինակը, որ պահելով հանդերձ մոնղոլական ծագումի մարմնական յատկանիշները՝ լիովին մոռցած է իւր հին Փինեթնի նման լեզուն եւ այսօր կը խօսի սլաւերէն<sup>2</sup>. մեզի աւելի մօտ է Թուրքիոյ արդի բնակչութեան այլազան տարրներու ձուլածոյ դանդուածը, ուր անտեսելով երկու երեք կաղմակերպուած փոքրամասնութիւններ՝ տուրանական աղբատիկ լեզուն իւր մահիկը պարզած է: Տարբեր էր անտարակոյց նաեւ հայ լեզուին ու ժողովուրդին յարաբերութիւնը՝ երբ Հայաստան իբրեւ պետութիւն պատմութեան մէջ առաջին անգամ կը կաղմակերպուէր, երբ Արտաշէս եւ Ջարհ հարեւան երկիրներէն նորանոր դաւառներ կը կցէին իրենց թագաւորութեան. դէնքի աշխարհակալութեան հետ նաեւ հայերէնը նուաճումներ կ'ընէր. այդպէս պէտք է հասկնալ Ստրաբոնի խօսքը Հայոց դաւառներու մասին «որպէս զի ամենեքեան համար լեզուն լինէին»<sup>3</sup>:

Պակաս չեն ընդ հակառակն ժողովուրդներ, որոնք ցեղային մէկ ծագում ունին, ինչպէս իբրեւական թերակղզին ի բաց առնելով Բասկերը, բայց կը խօսին տարբեր լեզուներ: Ուստի պիտի հետեւցնենք որ լեզուի միութիւնը կամ տարբերութիւնը՝ չափանիշ չէ ցեղային միութեան կամ տարբերութեան. նոյնը կ'արժէ առաւելապէս կրօնքի, քաղաքակրթական դարձումի, հաւատալիքներու եւն համար, որոնք աւելի դիւրաւ փոխանցելի են:

Ասով չենք ուզեր սակայն հաստատել թէ ժողովուրդի մը ցեղային ծագումը լուծելու համար բաւական է մարդաբանութիւնը: Դարեր տեսող խառնումներով ու խաչաձեւումներով այնպէս բարք են հիմայ ցեղային տեսակէտէ ժողովուրդները, մանաւանդ քաղաքակիրթ շրջաններու, որ ոչ մէկ զիտութիւն առանձին պիտի զօրէր լուծումը տալ ծագման

<sup>1</sup> Ripley William Z., The Races of Europe, a sociological study. Lowell Institute Lectures, London 1900, p. 25.

<sup>2</sup> Drontschilow Dr. Krumm, Beiträge zur Anthropologie der Bulgaren. Inaugural-Dissertation. Braunschweig 1914. S. Watefi, Anthropologische Beobachtungen an den Schülern und Soldaten in Bulgarien. Correspondenzblatt der Deutschen Anthr. Ges., 1901, Nr. 4.

<sup>3</sup> Strabo, Geographica, c. 528 5 (ed. Meineke), ὅστε πάντας ὁμογλώττους εἶναι: Այսպէս կը մեկնէ նաեւ Հ. Հիւրման, Հին Հայոց տեղւոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլգրիկեան: Վիեննա 1907, էջ 28, 53:

հարցին. ուստի լեզուաբանութեան, մարդաբանութեան, աղբատիկութեան, պատմութեան եւ օժանդակ զիտութիւններու միահարոյն լոյսին տակ պէտք ենք մերձենալ խնդրին երբ ստոյգ ու ճշմարիտ արդիւնք մը ձեռք բերել ուղինք:

Առօրեայ կեանքին մէջ ստէպ ցեղ, ժողովուրդ, ազգ բառերն իրարու համարժէք կը դնենք ու կը գործածենք. բայց մարդաբանութիւնը պէտք է անդրադառնայ այդ դաղափարներու նրբութեան եւ հաստատուն պահէ անոնց զանազանութիւնը, իբր պայման անդրադոյն քայլ մ'առնելու: Այդ զանազանութիւնը հիմնուած է մարդաբանական յատկանիշներու եւ քաղաքակրթական աղբատիկութիւնը մարդաբանութեան մէջ ցեղ կը սահմանուի՝ «Մարդկան բազմութիւն մը, ուր իւրաքանչիւր անդամի յատուկ է մարմնական (ու հոգեկան) հասարակաց յատկանիշներու համագումար մը»<sup>4</sup>: Յեղը կը ստորաբաժնուի ենթացեղի, երբ յատկանիշներու համագումարը կ'ընդարձակի եւ զայն կրող ենթականերու ծիրը կը սեղմուի: Ժողովուրդ բառը կ'արտայայտէ բազմութիւն մը, ուր առաւել կամ նուազ նոյն քաղաքակրթական, լեզուական եւ քաղաքական միութիւն կը տիրէ: Մինչ ազգ կը ցուցնէ այդ միութեան գործնական, անդրաբարձ զիտակցութիւնը: Դիւրին է այս փոքրիկ զանազանութենէն եզրակացնել թէ կրնայ ժողովուրդ մ'ըլլալ, որ կաղմուած ըլլայ տարբեր ցեղի անհատներէ, եւ ազգ մը ներկայացնէ. հետեւապէս մէկ ժողովուրդ կամ մէկ ազգ չի նշանակեր նաեւ մէկ ցեղ կամ ցեղային մէկ ծագում: Եւ իրապէս արդի մարդկութեան մէջ չկայ ժողովուրդ մը, որ կարենայ զիտականօրէն հիմնեալ պարժանքն ունենալ թէ միաձոյլ եւ հարազատ սերունդն է մաքուր ու անխառն ցեղի մը:

Յանձուկ միտս մարդաբանութեան պաշտօնն է՝ ժողովուրդներու այդ բովին մէջ կատարել իւր քննութիւններն ու վերհանել ցեղային խառնուրդներու երակները: Այդ դժուարին ստպարէզի մէջ հակառակ իւր դեռատի հասակին մարդկութեան համար զիտական

<sup>4</sup> Ripley, The Races, p. 17. K. Saller, Leitfaden der Anthropologie, Berlin 1930, S. 130. Յեղ կ'առնուէ վերացական համագումարը որոշ փոփոխութեան ընդունակ ժառանգական ծանուցիչներու, որով մէկ ցեղի յատկանիշները կրող անհատները երկրորդ ցեղի անհատներէն կը տարբերին: Յեղ եւ ժողովուրդ զաղափարներու սահմանին մասին բաւական վիճուած է եւ զեւ կը վիճուի. մենք կը դրժանանք վերի սահմանով:

մեծ նուաճումներ ըրած է, որոնք քաղաքական եւ ընկերական կեանքի մէջ անարձագանգ չեն մնացած: Մարդախօսութեան ճամբան, այս խմատով վերելք մըն է, որով այսօրուան սերունդէն կը բարձրանայ նախորդ սերունդներու. այդ ճամբուն իբր ուղեցոյց ունի մարդկային մարմնոյն յատկանիշները: Մարդկային մարմնոյն վրայ իբր գլխաւոր յատկանիշ կը նկատուին առ հասարակ հետեւեալ կէտերը. 1. հասակի, իրանի, բազկատարածի մեծութիւնը, 2. մորթի գոյնը, 3. մազի գոյնն եւ ձեւը, 4. աչքի գոյնը, 5. քթի չափն ու ձեւը, 6. գլխու-գանգի չափերն ու ձեւերը, 7. արեան բաղադրութիւնը: Բնական է ասոնց մէջ եւս կարեւորութեան տեսակէտէ կայ որոշ ատիճանաւորութիւն մը, զոր յընթացս պիտի տեսնենք: Կան նաեւ որոշ ցեղերու սեպհական յատկանիշներ, այսպէս մոնգոլական բիծը, մոնգոլական կողքը, ճապոնական ոսկրը<sup>5</sup> եւն, որոնք մասնական խընդիրներ են եւ հայ մարդախօսութեան անձուկ սահմանէն դուրս կ'ընան:

Մարդախօսութեան մէջ ընդունուած է չափերը ներկայացնելու շատ գործնական եւ նպատակայարմար մեթոտ մը, ցուցիչներով (index, indice) մեթոտը, որով հնարաւոր է որոշ չափով տարիքի գնահատութիւնը բառնալ, եւ առ հասարակ համեմատութեան ձեւը գիւրացնել: Սովորաբար մարմնոյ անդամի մը ո՛չ թէ երկայնութիւնը կամ լայնութիւնը իբր այդպիսի, այլ երկուքին համեմատութիւնը կը նշանակուի եւ կը համադրուի, բնական է առանց անտեսելու նոյն բացարձակ մեծութիւնները, այդ համեմատութիւնը հարկաւորով բազմապատկուած կը կոչուի ցուցիչ. ուրեմն ցուցիչներ կրնանք ունենալ երկայնութեան ցուցիչը կը գտնենք, բարձրութիւնը × 100 եւն:

<sup>5</sup> Otto Aichel, Epicanthus, Mongolenfalte, Negerfalte, Hottentotenfalte, Indianerfalte. Zeitschrift für Morphologie und Anthropologie, 1933, XXXI/1. L. Pales, Premières recherches sur la tache pigmentaire congenitale (tache mongolique) en Afrique équatoriale française. Journal de la Société des africanistes, 1933, II/1. Մոնգոլական բիծը գունանիւթի (pigment) խտնումն է մարմնոյ գանազան մասերու, մասնաւորապէս սրունքներու վրայ, որ նորածիններու քով կը տեսնուի. ճապոն նորածինները հարկաւոր առ հարկաւոր կը կրեն զայն: Մոնգոլական կողքը կը կոչուի՝ երբ երկու կողքերու կարուստը քթի արմատին քով հորիզոնական չէ, այլ վերի կողքը ուղղակի մինչեւ վարի կողքը կ'ընայ. ասոր մէկ տկար պատկերը կը տեսնուի նաեւ երոսպցի մանուկներու քով. օր. Միւնիսէի մէջ 1—6 ամսական աղաք մինչեւ 33<sup>10</sup>/<sub>100</sub> ունին, որ մեծնալով կամայ կամայ կ'անհետանայ. 12—25 տարեկաններու քով հազիւ 3<sup>30</sup>/<sub>100</sub> կը գտնուի: Ճապոնական ոսկր, որ գանազան անուններ կը կրէ զայն կրող ցեղակիցներու համեմատ, գանգի յետապիտեան մասին վրայ յաւելուածական ոսկր մըն է:

թեան-լայնութեան, երկայնութեան-բարձրութեան (զ. օր. գլխի), լայնութեան-բարձրութեան<sup>6</sup> եւն: Մարդախօսութեան մէջ ցուցիչներու չափ լայն գործածութիւն ունի նաեւ միջին արժէքի հաշիւը, որ մեծամեծ գիւրութիւններ կ'ընծայէ:

Մարդախօսութիւնը յատկանիշներու վրայ յեցած սերունդէ սերունդ բարձրանալով էական ենթադրութիւն մը իբր հիմ եւ սլայման ունի թէ այդ յատկանիշները սերունդէ սերունդ փոխանցելի են, այսինքն ժառանգական: Ժառանգականութեան օրէնքներու գիւտը կը պարտինք Հ. Գրիգոր Մեդել (1822—1884) աւստրիացի վարդապետին, որուն անունով Մեդելիականութիւն կը կոչուի: Մենդել<sup>7</sup> գնահատեց բոյսերու, մասնաւորապէս սրբուի վրայ արդասաւորման փորձեր ըրաւ տարբեր տեսակ ուրտներ իրարու հետ բեղմնաւորելով, եւ գտաւ, որ առաջին ուրտներու յատկանիշները (մեծութիւն, գոյն, ուրուկութիւն, ձեւ եւն) թուաբանական հաստատուն համեմատութեամբ կարելի է գտնել յաջորդ սերունդներու վրայ: Այդ փորձերէն հետեւեալ սկզբունքները եզրակացուց. 1. Յատկութիւններու համագումարը, «տիպն» իբր ամբողջութիւն՝ չի ժառանգուիր, այլ ամէն յատկանիշ առանձին. 2. խմբովին ժառանգուած յատկանիշները յաջորդ սերունդներու մէջ կրնան դարձեալ բաժնուիլ, այսինքն՝

<sup>6</sup> Dr. R. Martin, Lehrbuch der Anthropologie in systematischer Darstellung, Jena 1914, S. 63—103. Մարդախօսական մեթոդի ամբողջական ներկայացումը, ցուցիչները՝ էջ 177—183: Պայծառութեան համար քանի մ'օրինակ ցուցիչներու. երկայնութեան-լայնութեան ցուցիչը կը ստանանք մասնապատկական հետեւեալ բանաձեւով՝  $\frac{\text{լայնութիւն} \times 100}{\text{երկայնութիւն}}$ , նոյնպէս երկայնութեան-բարձրութեան ցուցիչը կը գտնենք  $\frac{\text{բարձրութիւն} \times 100}{\text{երկայնութիւն}}$  եւն:

<sup>7</sup> Հ. Գ. Մենդելի կեանքն ու բախում՝ պատկերն է շատ գիտնականներու ճակատագրին. 1854—1868 տարիներու ընթացքին նա քրտնաջան եւ գարմանալի փորձեր ըրած է բոյսերու վրայ որ արդի մեծամեծ գիւրութիւններով օժտուած մասնագէտներուն զարմանք կ'ազդէ: Մենդել իւր գիւտերը պարբերաբար կը հրատարակէր, սակայն գիտնական աշխարհը մեծ կարեւորութիւն չէր տար վանականի մը աշխատութեան. եւ սակայն թէ կանուխէն անգրագատնային այդ գիւտերու արժէքին՝ զարգիտականութեան օգուտին ենթադրութիւնները ընդունելութիւն չէին գտնէր մասնաւոր լուրջ գասակարգի մէջ: Մենդելի մահէն տարիներ ետք, երբ Է. Ֆոն Չէրմակ, Կ. Կորբէն, Հուլիոս Վրի (Vries) եւ Ու. Պէյթիլըն իրարմէ անկախ նոյն օրէնքները կրկին գտան, այն ատեն ի պատիւ աւելուածին հօր, որ նոյն գիտակցութեամբ ըսած էր՝ non omnis moriar (ամբողջապէս պիտի չմեռնիմ) ժառանգականութեան գիտութիւնը կոչեցին Մենդելականութիւն. սես Prof. E. Tschermak-Seysenegg, Zu Gregor Mendels 50. Todestag, Die Umschau, XXXVIII, 1934, Heft 1.

յատկանիշները «կը ճեղգուին» . 3. Յատկանիշներու արժէքը տարբեր է. երբ երկու տեսակ բոյսեր իրարու հետ արգասաւորուին անոնց գերակշիռ յատկանիշները միայն՝ առաջին սերունդին վրայ կ'արտայայտուին, բայց երկրորդին մէջ, սլայմանաւ որ իրարմով բեղմնաւորուին, առաջին խառնուրդի տեսակները հարազատ կրկին երեւան կ'ըլլեն 1 : 3 համեմատութեամբ. այն յատկանիշները, որ առաջին սերունդին վրայ գերակշիռ են՝ կ'անուանուին «տիրող յատկանիշներ», իսկ անոնք որ միայն երկրորդ սերունդին մէջ կը տեսնուին կը կոչուին «քագուն յատկանիշներ»: Մենդելականութեան այս սկզբունքները՝ իրենց մասնակի ճշգրտմանով իրագործում գտան կենդանական աշխարհի մէջ, եւ իբր Բարձրագոյն Մեդելիականութիւն կը մերձեցուին նաեւ մարդուն<sup>8</sup>:

Յուշուած է թէ մարդուն մարմնական յատկանիշներէն շատերը, ինչպէս եւ բազմաթիւ ախտեր, մենդելական օրէնքով կը փոխանցուին: Բայց առ հասարակ չափազանց մեծ դժուարութիւններ կ'ապուած է այս քննութեան, մարդուն համեմատական երկարակեցութիւնը, անոր մարմնական յատկանիշներու առանձին առանձին ժառանգուելը եւ մանաւանդ անոր խառնուրդի ազատ ընտրութիւնը՝ ամէնէն մեծ խոչընդոտներէն է: Վերջին պարզան միայն նկատելով թէ ենթադրենք իրողութիւն մը, որ ամէն սերունդ (որ արդէն իսկ խառնուրդի արդիւնք է)՝ տարբեր յատկանիշներով օժտուած ուրիշ սերունդի մը հետ խառնուի, անհնարին կը դժուարնայ յաջորդ սերունդի յատկանիշներու հարցը. մասնաւորապէս, որչափ ալ ճիշդ ու ապահով է ստորին գործարանաւոր աշխարհի համար տեսակի

<sup>8</sup> Հսկայ գրականութիւն մը զոյսցած է արդէն մենդելականութեան շուրջ. թոյլ տրուի մեզի յիշել քանի մը հատ միայն. Prof. Günther Just, Die Vererbung, Breslau 1927. Բարձրագոյն Մենդելականութեան մասին շատ գեղեցիկ եւ հակիրճ յօդուած մը հրատարակեց վերջերս՝ Vom höheren Mendelismus beim Menschen, Die Umschau, XXXVIII, 1934, Heft 2. A. Bauer, Vererbungslehre, Rassen-, Bevölkerungs- und Familienkunde (G. Freytag A.-G.), Leipzig 1934. Dr. L. Plate, Vererbungslehre, mit besonderer Berücksichtigung der Abstammungslehre und des Menschen, 2 Bde., Jena 1933. W. Bateson, Mendels Vererbungslehre. Aus dem Englischen übersetzt von A. Winkler. Berlin 1914. Ամէնուն համար դիւրահասկանալի հատոր մըն ալ հրատարակեց ռժեշկ Ա. Յ. ճէպիճեան, Ժառանգականութեան նորովկայը, Հայկ. 1934, էջ 304. հակասակ «Նորովկայ» մակդիրին՝ գրողութիւնս գիտական-ժողովրդական գեղեցիկ խմբագրութիւն մըն է եւրոպական ազդիւրներու, զոր կը յանձնարարենք կարգաւ. մարդախօսական յատկանիշները շօշափուած են՝ էջ 92—126, անդ:

հարազատ ու մաքուր պահպանութիւն, մարդուն քով պէտք է ընդունինք խառնածիններու հնարաւորութիւնն ու իրողութիւնը. հետեւաբար մարմնական յատկանիշները խառնումներով միշտ որոշ փոփոխութիւն մը կը կրեն, զոր կարելի չէ թուաբանական ճշգրտութեամբ հետապնդել: Ասոնց կ'ընկերանան որոշ արտաքին ազդակներ, որոնք տեսական փոփոխութիւն յառաջ կը բերեն յատկանիշներու վրայ. զ. օր. բնակավայր<sup>9</sup>, պաշտօն, սնունդ, հիւանդութիւն եւն. բարբախտաբար այդ փոփոխութիւնները ժառանգական ընդթ չունին: Այս փոքրիկ ակնարկէն կարելի է ընդհամարել թէ ո՛րչափ առապար եւ անհարթ է մարդախօսութեան ասպարէզը, ուստի զարմանալի չէ, եթէ ամէն մարդախօս, ինչպէս ամէն հնէախօս, խաւազէտ, նոյն կարծիքներն ու տեսութիւնները չունենայ:

1. ՀԱՅ ՄԱՐԴԱԽՈՍՈՒԹԵԱՆ ԱՂԻՒԻՐՆԵՐԸ

Ժողովուրդի մը մարդախօսութեան աղբիւր բնականաբար ինքն իսկ ժողովուրդն է. որուն վրայ հեղինակն իւր գննութիւններն ու չափերը կը կատարէ. սակայն դժուար եւ ատէպ անհնարին է մարդախօսին բաղձալի քանակով ու եղանակով անհատներ ուսումնասիրել մարմնական տեսակէտէ, ուստի կը տարուինք ուսումնասիրել եւ օգտագործել նախորդ մարդախօսներու քննութիւններն ու արդիւնքները: Հայ մարդախօսութեամբ բաւական մեծ թիւով գիտնականներ զբաղած են. անոնց զբաղատման եղած է անտարակոյս փոքր Ասիոյ մարդախօսական դժուարին հարցը, ուր հայն իւր մարմնական առանձնայատկութիւններով եզական դիրք մ'ունի. քիչ չեն ազգած նաեւ քաղաքական պատճառներ, ինչպէս 1924ին Ամերիկա Հայոց քաղաքացիութեան խնդիրը. որուն հարցաքննութեան ամբողջ արդիւնքը առանձին գրքոյով հրատարակուած է<sup>1</sup>:

Հոս նկատի կ'առնենք միայն այն հեղի-

<sup>9</sup> Տես այս առթիւ մասնաւորապէս Աւստրալիացիներու մասին՝ Taylor Griffith, Environment and Race. A Study of the evolution, migration, settlement and status of the races of man. London 1927.  
<sup>1</sup> Ասոնց վերնագրի. In the District Court of the United States for the District of Oregon, United States of America, — plaintiff; vs. Tatos O. Cartozian, — defendant, Portland, Oregon, April 5, 1924, 10 a. m. (առաջին քննութիւն, իսկ վերջին քննութիւնը կ'ըլլայ Նիւ Եորք, 11 Ապրիլ, 1924). Գրքոյիս ունի 97 էջ, եւ կը կրէ վերջը նշանաւոր մարդախօս-ազգագրագէտի ստորագրութիւնը՝ Յրանց Բոսա:

նակները, որոնք անձամբ չափեր ու զննութիւններ կատարած են :

Հայ մարդաբանութեան հիմնադիր կրնանք անուանել Լիոնի համալսարանի մարդաբանութեան ուսուցչապետը Էրնէստ Շանտր, որ ԺԹ. դարուն Ռուսահայաստան, Տաճկահայաստան ու Կիլիկիա կատարած է երեք արշաւանք<sup>2</sup>, ուր մարդաբանութեան հետ նաեւ հնախօսական ծրարներ մը կը հետապնդէր : Արդի մարդաբանները միշտ վերապահութեամբ նկատի կ'առնեն եւ մինչեւ իսկ կ'անտեսեն հին մարդաբաններու կատարած ուսումնասիրութիւնները, եւ իրաւամբ վասն զի ժամանակին նոյն ըմբռնումը էր տիրելը չափերու ու զննութիւններու կարեւորութեան եւ եղանակի մասին<sup>3</sup>, բայց Շանտրի գործքերը, որ համեմատաբար հին չեն, կը պահեն լիովին իրենց թարմութիւնն ու արժէքը : Է. Շանտր, որուն անունը ֆրանսական հնախօսութեան եւ մարդաբանութեան մէջ կարեւոր տեղ մը զբաղւած է, հայ եւ առհասարակ արեւելեան ժողովուրդներու մարդաբանութեան կարեւոր աշխատութիւններ նուիրած է, որոնց մէջ յիշենք՝ Recherches anthropologiques dans le Caucase, չորս հատոր փառաւոր գործքը՝ տպուած Պարիս 1887. Premiers aperçus sur les peuples de l'Arménie Russe. Bull. Soc. d'Anthropologie, IX, 81—85, Lyon 1890. A travers

<sup>2</sup> Հետեւեալ գծով՝ 1890ին տիկնոջ հետ՝ Թիֆլիս—Բագու, այցելած Տերտեր (Ղարաբաղ)—Շուշի—Օրդուպատ—Ադուլիս—Ջուղա—Նախիջևան—Արարատ—Սարգարբուլազ—Ակոռի—Իգուրի—Կողբ—Էջմիածին—Երեւան—Նոր Բայազետ—Թիֆլիս—Բորժոմ—Ախալցխա—Արբաստան—Բաթում : — 1893ին երկրորդ ճամբորդութեան կը ձեռնարկէ այս անգամ Անդաբա—Պաերիս—Բողազէօյ—Երզրատ—Կեսարիա—Անգարա—Պոլիս : — Յաջորդ տարին նոյն գծով կու գայ մինչեւ Երզրատ, յետոյ Նէֆէսեօյ (Երբեմնի Տաւրոս) : — Argee (Արգես) : — Սուրբ Կարապետի վանք—Չինճիսկերէ—Կիլիկիա—Ուղան—Հաճըն—Սիւ—Ատանա—Մերսինա, ուսկից ծովու ճամբով կը վերադառնայ Ֆրանսա տէրութեան արգելքով կրկին շարժելու համար Թուրքիա :

<sup>3</sup> Մարդաբաններու կրկին ժողովներու մէջ՝ Մոնակո (1906) եւ ժընև (1912) շափերու կերպին ու կարեւորութեան մասին բանակցութիւններ ու համաձայնութիւններ տեղի ունեցան : Թէեւ դեռ միշտ բացառութիւններ կը գտնուին, զորոնք սակայն յառաջդիմութեան իբր պայման եւ փորձերու ազատ ասպարէզ պէտք են նկատուի : ամէնէն յանձնարարուած դասադիրքն է մարդաբանութեան՝ Dr. Rudolf Martin, Lehrbuch der Anthropologie in systematischer Darstellung, mit besonderer Berücksichtigung der anthropologischen Methoden, für studierende Ärzte und Forschungsreisende, Jena 1914, p. XVI + 1181, պատկերազարդ : ճօխ մատենագիտական ցանկով : Նոր ապագութիւնը 1928ին : Նորագոյն մարդաբան մը դաստասանին համեմատ «հնագոյն աստղաբանութեան մէջ մասը գրուած թեման միայն կարելի է գործածել, եւ մինչեւ իսկ անտեսելի է» : Eickstedt, Rassenkunde und Rassengeschichte der Menschheit, I. Band, p. 50.

l'Arménie russe, Tour du Monde, LXI, 1892, p. 369—416j LXII, p. 225—288. Rapport sur une mission scientifique en Asie Mineure, spécialement en Cappadoce 1893—1894. Nouv. arch. des missions scientifiques et littéraires, VII, p. 398—366. Réponse à la question de M. A. Bogdanov, Quelles sont les données anthropologiques et archéologiques pour la connaissance de l'histoire du Caucase? Congrès international d'anthropologie, II<sup>e</sup> session, Moscou, 11, p. 77—99<sup>4</sup>.

Մեզ համար ամէնէն կարեւորն է իւր վերջին գործքը, ուր ամփոփած է գեղեցիկ կերպով իւր նախորդ ուսումնասիրութիւններու արդիւնքները՝ Recherches anthropologiques dans l'Asie Occidentale: Missions scientifiques en Transcaucasie, Asie Mineure et Syrie 1890—1899, Archives du Muséum d'histoire naturelle de Lyon, t. VI, Lyon 1895, p. XVII + 262<sup>5</sup>. Հեղինակը նախ կը խօսի

<sup>4</sup> Ամբողջութեան համար յիշենք Շանտրի միւս գործքը, որոնք Մերձաւոր Ասիոյ կը հային : E. Chantie, Les Arméniens; esquisse historique et ethnographique, Bull. Soc. d'Anthropologie, XV, Lyon 1897, p. 49—101. Recherches archéologiques dans l'Asie occidentale. Mission en Cappadoce. Bull. Soc. d'Anthropologie, XVII, Lyon 1899, p. 155—167. Les forts de la vallée inférieure de la Koura, ibid. 1892, p. 72—82, pl. XXXVI. Rapport sur une mission scientifique en Arménie russe. Nouvelles archives des missions scientifiques et littéraires, Paris 1893, p. 48, avec 8 pl.; Excursion en Transcaucasie, Bull. soc. de géographie de Lyon XI, Lyon 1893, p. 564—566; L'Ararat, Annales de Géogr. III, Paris 1893, p. 81—94. Voyage, Lyon républicain, Lyon 1890. Superstitions répandues chez les Tatars de l'Aderbeidjan et recueillies à Choucha, Revue trad. pop. VI, 1891, p. 467—469. Recherches anthrop. sur les Aïssoris ou Chaldéens émigrés en Arménie, Lyon 1891, 8<sup>e</sup>, p. 28: Recherches anthrop. sur les Tatars Aderbeidjanis de Transcaucasie en Turcomans iranisés, Bull. soc. d'anthropologie XI, Lyon 1892, p. 28—44. Rapport sur une mission scientifique dans l'Asie occidentale et spécialement dans les régions de l'Ararat et du Caucase. Archives des missions scientifiques et littéraires, sér. 3, t. X, Paris 1883, p. 199—263, pl. 14. Գերմաներէն ամփոփող մը լոյս տեսած է Շանտրի Արարատեան ուղեւորութեան՝ Chantres Reisen am Ararat, Globus, LXII, p. 246—250, 278—281. Տիկնի Շանտր, որ ընկերացած էր իւր ամուսնոյն, զի ռուս է իւր տղաւորութիւնները : A travers l'Arménie russe, Paris 1893, p. 372, avec 150 ill. է. Շանտրի եւ տիկնոջ գործքերէն բաղաձայնական թարգմանութիւններ լոյս տեսան Բաղձաձկուի մէջ 1891—1896 տարիներու ընթացքին, որոնք աւելի ուղեգրական են :

<sup>5</sup> Լուսանկար տախտակներու մէջ ներկայացուած Հայերն են երկու հարս՝ Ախալցխայէն, երկու հարսի Ադուլիսէն եւ երկու այր : Տաթեւէն եւ Գօլէն երկրորդու այրեր, Կեսարիայէն՝ Պր. Գարազեան եւ որդին, Կեսարիայէն եւ Սիւնի երկու հարսի, Հաճընէն եւ Սոսանէն՝ երկու այր. տախտակ I—VIII : Շանտրի այս գործքին շատ գեղեցիկ մէկ ամփոփողը տուած է Ալ-տէպարան, ուր նշանակած է նաեւ մարդաբանական արդիւնքները : տես՝ Հայ գեղարվեստի. Նոր Կեսանք, (Լուսնոյն) 1898, էջ 247—252, 262—264 :

Հայոց աշխարհի ու ժողովրդեան մասին, կու տայ պատմական ու արդարական ակնարկներ, կը ներկայացնէ Հայոց թշուառ վիճակը : Բարձր կը գնահատէ Հայոց մտաւոր ու հոգեկան յատկութիւնները : Շանտր իւր երեք արշաւանքներու ընթացքին չափած եւ ուսումնասիրած է 341 հայ, 44ը կին : Կարեւոր են իր չափերն ու զննութիւնները, վասն զի անոնք մեծ մասով կատարուած են բուն մայր երկրի վրայ, ստորին դասակարգի մէջ, ուր խառնուրդի եւ գաղթի հնարաւորութիւնը շատ աւելի սահմանափակ է :

Շանտրէն անկախ, բայց միաժամանակ նոյն նիւթին վրայ կ'աշխատէր նաեւ աւստրիացի բժիշկ, Բերլինի համալսարանի մարդաբանութեան ուսուցչապետ Ֆելիքս Ֆոն Լուչան : Ֆոն Լուչանի անուան մարդաբանութեան մէջ մեծ ճոխութիւն կ'ապուած է, թէեւ Ֆոն Լուչան անձնապէս իւր արշաւանքներու մէջ շատ աւելի քիչ մարդաբանական խուզարկման նուիրուած է, քան որ կրնանք ենթադրել<sup>6</sup> : Բայց բժիշկի պաշտօնը մեծ պատեհութիւն կ'ընծայէր իրեն ամօթյաձ առիտներու մարմնոյն մերձեցալու : մարդաբանութեան առաջին եւ գլխաւոր դժուարութիւնն է համոզել ժողովուրդը, որ թոյլ տայ չափեր անոնու եւ զննութիւններ կատարել : Ֆոն Լուչանի համար երկրորդ առաւելութիւնն էր արեւելեան կարգ մը լեզուներու ծանօթութիւնը, ինչպէս թուրքերէնի, յունարէնի : ցաւալի է սակայն որ նա չէ կրցած գնահատել Հայոց կարողութիւններն : առհասարակ նա տեղեակ չ'երեւար Հայոց պատմութեան եւ ներկայ վիճակին : իրեն համեմատ Հայերը. «միշտ դէպքաբարցիներ եւ անհաւատարիմ հպատակներ եղած են»<sup>7</sup> : Ֆոն Լուչան ստէպ առիթ ունեցած է Փոքր Ասիա կողմակերպուած արշաւանք կատարելու, որոնք ցանցառ անդամ միայն մարդաբանական նպատակ ունէին : ինչպէս 1882ին, 1884ին : դժբախտաբար անոնք սահմանափակուած են Կիլիկիա, Սիւրիա եւ շրջակայքը : իրեն ծանօթ է Հայը Հայաստանէն դուրս : Աչքի առջև ունի 136 Հայերու մարդաբանական տուեալները, որոնց 110ը չափած է Բժիշկ Ասատուր Այթուեան : Ֆոն Լուչան մեծ թուով երկեր թողուցած է, որոնց մէջ մարդաբանական կարեւոր գրութիւններն են

<sup>6</sup> Տես համառոտ կենսագրութիւնը՝ H. Virchow, Gedächtnisrede auf Felix von Luschan, Zeitschrift für Ethnologie, 65. Jahrg., Berlin 1924, S. 112—117.

<sup>7</sup> Felix von Luschan, Völker, Rassen, Sprachen, Berlin 1922, S. 141.

Petersen und v. Luschan, Reisen in Lykien, Mylias und Kibyris, Wien 1899 (C. Gerolds Sohn). Նոյն գրքին ԺԳ. գլուխը իւր կարեւորութեան համար արտասուած է Բերլինի Մարդաբանական Ինստիտուտի մէջ՝ Die Tachdatschy und andere Überreste der alten Bevölkerung Lykiens. Archiv für Anthropologie. Organ der deutschen Gesellschaft für Anthropologie, Band XIX, p. 31—53. Ֆոն Լուչանի գրքն է նաեւ Zur Anthropologie Kleinasien, Globus, LXXIII, p. 211—214. Beiträge zur Landeskunde des Trojas, Abhandlungen der Akademie der Wissenschaften, Berlin 1879; Alttröjanische Gräber und Schädel, ibidem, 1882; Über alte Schädel von Assos und Cypern, ibidem, 1882. Այս յօդուածներուն մէջ հեղինակը կ'ուղէ ցուցնել թէ Փոքր Ասիոյ եւ զբարձր վիճակը կ'զգիներու բնակիչները մարմնական այն յատկանիւնքը կը կրէին, ինչ որ Հայոց քով այսօր կը գտնենք<sup>8</sup> : Յատկապէս Փոքր Ասիոյ արդի բնակչութեան մարդաբանութեան մասին խօսած է Լոնդոն 1911ին Հիլբուլթի յիշատակի ճառասացութեան առթիւ : նոյն ճառը, որ ընտիր ամփոփ ու մեծարժէք գործք մըն է, հրատարակուած է Մեծ Բրիտանիոյ եւ Իրլանդայի մարդաբանական հաստատութեան թերթին մէջ հետեւեալ վերնագրով՝ The early inhabitants of Western Asia, The Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland, vol. XLI, 1911, p. 221—244. Ֆոն Լուչան Փոքր Ասիոյ մարդաբանութեան մասին միլեոնոյն դադարաբաններ կը պարզէ նաեւ իւր յաճախ յիշատակուած նորագոյն երկրի մէջ՝ Völker, Rassen, Sprachen. Berlin 1922.

Յայտնի մարդաբաններու կարգին Հայերով զբաղած եւ անձամբ չափեր առած է նաեւ ֆրանսացի մարդաբան Էոթէն Պիտար. ուսումնասիրութեան արդիւնքը լոյս տեսած է Բուկարէստ, գիտութեան տեղեկատուին մէջ այս վերաբանութեամբ՝ Contribution à l'anthropologie des Arméniens, Bulletin de la société roumaine des Sciences<sup>9</sup>, Bucarest 1912. Թանկազին յօդուած մ'ունի Թիֆլիսի Համալսարանի Ուսուցչապետ Ա. Զաւարիշվիլի՝

<sup>8</sup> Վիեննայի մարդաբանական ժողովին առթիւ իւր անտեթիւնը պարզեց «արմենոյի» տիպի մասին՝ ի թերթին Correspondenzblatt der Deutschen Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, München 1912, S. 94—96.

<sup>9</sup> Buletinul societatii Române de stiinte, Bucaresti, Anul. XXI, 1912, p. 341—348. չափած 124 անձ Գորբուծայի շրջանէն :

Կովկասի ժողովուրդներու ցեղային բաղադրութեան մասին<sup>10</sup>. Ջաւախի լեռնային լեռնաշղթան համառոտ գրութիւններով վաստակած է անտարակոյս մասնագէտի հեղինակութիւնը նիւթիս մէջ. անոր յօդուածը մասնաւոր արժէք մը կը ներկայացնէ մանաւանդ ատաղձի ճոխութեամբ. նկատի առնուած են Հայեր (մինչեւ 799 թիւով), Վրացիներ (չորս դասակարգութեամբ), Չէրքէզներ, Գարաչայցիներ, Լեզգեր, Այսորիներ, Օսէթներ, Չէչէններ, Կուժուխներ, Թաթարներ, Ուսեցիներ եւ Հրեաներ: Կովկասեան ժողովուրդներու մարդաբանութեան զեղեցիկ էջեր նուիրած էր նաեւ von Erckert, որ կրցած է չափել 21 հայ շատ մանրամասն ու զեղեցիկ են անոնց մասին տուած նկարագրութիւնները. աշխատութիւնս լոյս տեսած է ի թերթին Archiv für Anthropologie, XIX, 1891. Kopfmessungen kaukasischer Völker, S. 55—84, 211—250, 331—356. յատկապէս Հայոց մասին, էջ 242—243:

Միացեալ Նահանգներու մէջ Հայոց ծագման շուրջ յարուցուած խնդիրներն առիթ եղան Փրանց Բոասի, որ ուսումնասիրէ Հայրենիքի եւ գաղթավայրերու մէջ ծնած ու սնած Հայերը. այդ հարցը կարելոր հանդամանք մը կը զգենու այնու որ մարդաբանութեան մէջ ընդունուած սկզբունք է շրջակայքի ազդեցութիւնը մարդաբանական յատկանիշներու վրայ: Գերմանացի մարդաբանը, որ Հայ քաղաքացիութեան դատին մէջ պաշտպանի դեր կատարած էր, չափած ու զիտած է ասիական Հայեր 74 այր եւ 54 կին, որոնց իրր համեմատութեան եզր կրցած է գտնել արական սեռէ 9 չափահաս, 27 մանուկ, եւ իգական սեռէ՝ 15 չափահաս, 30 փոքրատեղի ամերիկացիներ: Աշխատութիւնս հակառակ իւր փոքր ծաւալին շատ զեղեցիկ եւ շատ կարեւոր է, լոյս տեսած Բերլինի Ազգայնութեան Հանդէսին մէջ՝ Bemerkungen über die Anthropometrie der Armenier, Zeitschrift für Ethnologie, Organ der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, LVI. Jahrg., Berlin 1924, p. 73—84.

Ռուս-աւստրիական ճակատէն Համաշխարհային Պատերազմի ժամանակ՝ գերեզմանները շատ լուրջ ու մանրամասն մարդաբան-

ասկան քննութեան ենթարկուած են: Աւստրիոյ կայսերական զերեւաններու մէջ գտնուած են միայն 179 հայեր, ըստ Պրոֆ. Ռ. Պէօզի, եւ որոնք չափուած են ամէն մանրամասնութեամբ, մասամբ լուսանկարուած ու դաճի մէջ առնուած. դժբախտաբար զեռ չեն հրատարակուած այդ բոլոր քննութիւններու արդիւնքները. չափերու եւ ուսումնասիրութեան գործողութիւնները ինչպէս եւ գերիներու թիւերը նկարագրած է ինքնին Պրոֆ. Պէօզի երեք տեղեկատուութիւններու մէջ՝ Bericht über die von der Wiener Anthropologischen Gesellschaft in den k. u. k. Kriegsgefangenenlagern veranlaßten Studien, Mitteilungen der Anthropologischen Gesellschaft in Wien, 1915, Band XXXIV—XXXVII, S. 219—235; 1916, S. 107—131; 1917, S. 77—100.

Գերմանիոյ մէջ Հայոց դէմ վերջին խնդիրները ծնունդ տուին փոքրիկ պրակի մը, ուր գետեղուած են Հայոց ծագման հայոց շահեկան յօդուածներ, մասնաւորապէս մարդաբանական է Դիւ. Արեղեանի յօդուածը չէկ մազի ու բաց դոյն աչքի մասին՝ Nordische Typen in Armenien: Armeniertum-Ariertum, Potsdam 1934, p. 11—16:

Հայ մարդաբանութեամբ մասնաւորապէս հետաքրքրուած են ուսու մարդաբանները, որոնց նիւթական զիւրութիւններ ու պատահութիւններ անպակաս էին Ռուսահայաստանի եւ մերձաւոր գաղթավայրերու մէջ: Ուստի մեծ թիւով ուսումնասիրութիւններ լոյս տեսած են Հայ մարդաբանութեան մասին ուսեւրէն լեզուով, որոնցմէ յիշենք՝

Ի. Պանտիլիսով, Антропологические наблюдения на Кавказе. Записки Кавк. Отд. Русск. Геогр. О-ва. XV, 1893, օգտագործած է 2300 Հայ զինուորագրեալներու չափերը: Նոյն հեղինակն ունի նաեւ փոքրիկ պրակ մը Կովկասի ցեղերու բաժանման մասին, Расы Кавказа, Թիֆլիս 1900, էջ 16. ուր նկատի առնուած են մեծ թիւով Հայեր Վանէն, Թիֆլիսէն եւ Նախիջևանէն: Դիւ. Տվաթիանովիչ 1896ին կը հետազօտէ 105 զինուոր ու զիւրացի Բորչալուի եւ Թիֆլիսի շրջանէն, զոր իրր քննաճառ կը հրատարակէ՝ «Նիւթեր Հայ մարդաբանութեան համար», Պետերբուրգ 1897: Պրոֆ. Դ. Ն. Անուշին, «Հայերը մարդաբանական եւ աշխարհագրական տեսակետից», ուսերէն բնագիրը լոյս տեսած՝ Братская помощь Армянам, 1898.

<sup>10</sup> Die Rassenzusammensetzung der Kaukasusvölker, Archiv für Anthropologie, Organ der deutschen Ges. für Anthr., Neue Folge, Bd. XX, Braunschweig 1925, S. 77—90.

Հայերէն թարգմանութիւնը Մ. Շովրեանէ<sup>11</sup>: Անուշինի այս գրութիւնը աւելի ամփոփողն ու համադրութիւնն է մինչեւ նոյն ժամանակ կատարուած ուսումնասիրութիւններու: Է. Վ. Էրիխսոն, К антропологии Армян. Русский Антропологический Журнал, Մոսկուա 1907, Թիւ 3—4. Ռուս մարդաբանական միւլտիպլիկացի մէջ լոյս տեսած է նաեւ Պրոֆ. Ն. Ի. Անսերովի մէկ գրութիւնը՝ Նոր Նախիջևանի Հայերու մասին, չափած 114 հոգի. վերնագիրն է՝ Нахичеванские на Дону армяне в антропологическ. отношении, անդ, 1926, Թիւ 15, թերթ 1—2: Անսերովի այս գրութեան բովանդակութիւնը տուած է K. Saller, Leitfaden der Anthropologie, Berlin 1930, p. 183. Հայուհիներու կոնքսակրի վրայ չափեր առած է բժիշկ Վահէ Միլնասեան, Über einige Rassenmerkmale der Armenierinnen. Wiener klinische Wochenschrift, 1907, Bd. 20, S. 90.

Հայերս մինչեւ հիմայ ներգործապէս չենք հետաքրքրուած մեր մարդաբանութեամբ. դժնայնաբար քիչ փախուցիկ ամփոփողներ տալով կամ քաղուածական թարգմանութիւն կատարելով մեր մարդաբանութեան հայոց կերպական աշխատասիրութիւններէ<sup>12</sup>. մեղի ծանօթ չէ Հայագրի մը որ անձամբ չափեր առած եւ ուսումնասիրութիւններ կատարած ըլլայ: Մ. Միլնասեանի՝ «Մատենաշար Հայկական վերաշինութեան», հինգ հատորները (լոյս տեսած Փրէզնո, 1922—1925) հեռաւոր փորձ մըն են Հայ մարդաբանութիւնը Հայուն ծանօթացնելու, եւ պէտք ենք ըսել շատ անբաւական: Անոր ուսուցիկ լեզուն, բանաստեղծի վայել երազային պատկերները ժողովուրդի մ'ապագային մասին, ճոռոմարան ոճը կարճէս կը դիտեն միայն ծայրաստիճան ազգասէր մինչեւ ազգամոլներ չունեն ընթացողին, եւ ո'չ՝ գիտական հիմնեալ ճշմարտութիւններ հաղորդել: Այլուստ բաց ի ցիր ու ցան յօդուածներէ<sup>13</sup>, որոնք առթապէս

<sup>11</sup> Արարատ, Լ., 1899, էջ 37, 87, 143:  
<sup>12</sup> Հ. Յ. Տաշեան, Ուսումն գասական հայերէն լեզուի, Վիեննա 1920, էջ 23—47: Ծ. Նարդունի, Հայկական ցեղը եւ իւր քաղաքացիութիւնը Ասիայէն մինչեւ Եւրոպայ, հաւաքած Դիւ. Գ. Մանուկոյան, La race les races. Յ ա ո ա շ., 1934, Թ. 2419, 2430, 2436, 2442. Նոյնը տուած է նաեւ Է. Պրոսարի, Les races et l'histoire գործի բովանդակութիւնը: Տես եւ A. C. Haddon, Les races humaines et leur répartition géographique գործի հոգեկան տեսակետը, Յ ա ո ա շ., Ժ. տարի, 1934, 2528:  
<sup>13</sup> Մ. Սաֆրաստեան, Հայ ցեղի ծագման խնդիրը, Բաղմալէպ, ՁԹ., 1931, էջ 109—114, 208—213, 255—258, 428—433: Մ. Միլնասեան նոյն ուղղութեամբ գրած

երեւան կ'ելլեն օրագիրներու եւ ամսաթերթերու մէջ աղօտ դադարաւոր մը տալու համար սոյն գիտութեան, չենք ճանչնար ուրիշ հայերէն աշխատութիւն այս ուղղութեամբ: Մենք անձամբ առիթ ունեցանք զբաղել նիւթովս եւ 36ի չափ հայեր չափել. պէտք ենք ըսել որ այդ թիւը շատ փոքր է, սակայն նախորդ ուսումնասիրութիւններու վրայ իբրեւ դոյզն յաւելուած մը կրնայ նկատուիլ:

Մարդաբանութեան ամէնէն կարեւոր գլուխն է գանդարանութիւնը. բայց դժբախտաբար շատ դժուար է այդ ճիշդին ատաղձ հայթայթել, Հայ գանդար սակաւաթիւ են եւրոպական թանգարաններու մէջ. Շանտր<sup>14</sup> գիտէ թէ իւր ժամանակ Մոսկուայի մարդաբանական հաստատութիւնն ունէր 7 հայկական գանդ (3 Բուլղարիայէն, 4 Անդրկովկասէն), 5 հատ ինքը բերած է Հայաստանէն, 2 հատ ալ Պարիս կար, զոր նկարագրած է Blumenbach, Crania ethnica, p. 503, note 2, pl. XVII: Յոն Լուչան<sup>15</sup> իւր արամադրութեան տակ ունեցած է 26 հատ. Պոլսէն բժիշկ մը, անտարակոյս Հայ, Վիեննայի կայսերական մարդաբանական թանգարանին կը նուիրէ 43 հայկական գանդ Փոքր Ասիոյ գանդան շրջաններէն: Պրոֆ. V. Giuffrida-Ruggeri մանրամասնութեամբ չափած ու հրատարակած է գանդ փոքրիկ պրակի մը մէջ՝ Contributo all' antropologia fisica delle regioni dinariche e danubiane e dell' Asia Anteriore, Firenze 1908, p. 42—47: Մեծագոյն հաւաքածոյ մը կրցած է կազմել Պրոֆ. Վ. Բուճակ (ի Մոսկուա), որ Վանի եւ Բաղէշի շրջաններէն 106 հայկական գանդ ձեռք բերած է իւր անհատական թանգարանին համար. ուսու պրոֆէսորն ընդարձակ ու զեղեցիկ երկասիրութիւն մը հրատարակած է հայկական գանդի մասին Ռուս Մարդաբանութեան Թերթին մէջ, որ արտատպուած է այս տիտղոսով՝ Crania Armenica, исследование по антропологии Передней Азии. Москва 1927, էջ 263, տախտակ XXV:

Տարակոյս չկայ, որ այս ցանկը անթերի չէ. բնական է կան զեռ ցիր ու ցան ուսումնասիրութիւններ որոնք ուղղակի Հայոց կը հային. բայց դժբախտաբար մեր ծանօթու-

է նաեւ այլ եւ այլ թերթերու մէջ. ինչպէս Հայաստանի ամսագիր, 1925 (Գ. տարի), էջ 110—127. Կոչնակ, 1922, Թ. 11. Հայերէն ամսաթերթ, 1925:  
<sup>14</sup> Recherches anthr. dans le Caucase, p. 66.  
<sup>15</sup> The early inhabitants, The Journal of the Royal Anthr. Inst., 1912, p. 240.



թեան չեն հասած: Բայ սատի աննպատակ պիտի չըլլար ստորեւ տալ փոքրիկ ակնարկ մը նաեւ մեր դրացիներու մարդաբանական աղբիւրներու վրայ, որոնց մարդաբանութիւնը աւելի քան մէկ տեսակէտով սերտ կապուած է հայ ժողովուրդի մարդաբանութեան հետ, ինչպէս որ ստէպ մեր ճակատագիրը անոնց ալ բախտն եղած է պատմութեան մէջ<sup>16</sup>:

<sup>16</sup> Կովկասի մարդաբանութեան համար անգնահատելի արդիւնք չհասած է անտարակոյս Ալ. Չաւախիշվիլի, որուն գործքերէն մին արդէն վերջ յիշեցնէր. վրացի մարդաբանը յատկապէս ուսումնասիրած է իւր հայրենակիցներու մարդաբանութիւնը եւ սրակ սրակ հրատարակած է Մոսկուայի ուսմարդաբանութեան թերթին մէջ (բոլորն ալ ուսուերէն լեզուով). յիշեցնէր Վրաստանի մարդաբանութեան համար. Գարթլի վրացիներ. Journal russe d'anthropologie, 1905, Թ. 3-4: Վրաստանի մարդաբանութիւն, Կախէթի վրացիներ, անդ, 1907, Թ. 3-4: Վրաստանի մարդաբանութիւն, Գուրխի վրացիներ, անդ, 1912, Թ. 2-3: Եւրոպ. տարի կը գրէ այն տեղ Միւրգելից վրացիներու մասին, Թ. 1-2: յետոյ՝ երկայնագլխութիւնը վրաց քով, անդ, 1912, Թ. 3-4: Կաւկասի Հրեաները, անդ, 1912, Թ. 4 եւն: Աւելի ընդարձակ ծրագրով դրացած է A d o l f D i r r, Anthropologische und ethnologische Übersicht über die Völker des Kaukasus, Petermanns Mittheilung, XVII, 1913, S. 135; Die gegenwärtige Bevölkerung des Kaukasus. Vergleichende anthropologische Untersuchung, 1917; Anthropologischer Bestand der gegenwärtigen Bevölkerung des Kaukasus, Medizin. Mitt. Georgiens, 1923, Nr. 3-5; Die kaukasische Rasse, Mittheilung der Georgischen Staatsuniversität, Tiflis 1923, Nr. 3. P., Zur Anthropologie der Georgier in Kartalinien und Kachetien, Globus (S. A.), p. 335-337. St. Somnier, Note volante sui Karacai ed alcune misure di Abasá, Khabardini e Abasekh, Arch. per l'Ant. Etn., XXXI, 1901, p. 413-457. v. Erckert, Kopfmessungen kaukasischer Völker, Archiv für Anthr., XVIII, p. 263-284, 297-335, XIX, p. 55-84, 211-249, 330-356. A. Arutinoff, Այսորիներու մարդաբանութիւնը, Journal russe d'anthrop., 1902, Nr. 4, Ուտերը, անդ, 1905, Թ. 1-2. N. W. Giltschenko, Materialien zur Anthropologie des Kaukasus, St. Petersburg 1890, S. 217 (ընդգրկը ուսուերէն), բովանդակութիւնը տուած L. Stieda, Die Osseten, Ի թերթին Biologisches Zentralblatt, Bd. XI, 1891, Nr. 9-10. S. Weissenberg, Die kaukasischen Juden in anthropologischer Beziehung, Arch. für Anthr., Bd. VIII, 1909, Heft 4. E. Metschnikoff, Über die Beschaffenheit des Augenlides bei den Mongolen und den Kaukasiern, Zeitschrift für Ethnologie, 1874, 6. Bd., S. 153. J. Pohl, Die Querschnittform des Kopfhaares der Kaukasier, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, 1897, S. 483. Smirnow, Sur la couleur des cheveux et des yeux de divers peuples du Caucase, Bulletin de la société d'anthrop. de Paris, 1907. Նոյնպէս Գ. Գուրտովի ուսումնասիրութիւնները Լեզերու, Թաթարներու եւն մասին ուսմ մարդաբանութեան թերթին մէջ, եւ որբէններ, զորոնք զանց կ'անենք յիշել:

(Շարունակելի:) Գ. Է.

**Թ Ո Ւ Ն Ի Կ Ե Ը Ն Ք Ի Ս Ը Ս Ո Ւ Ն**

1. Կոստանդին Միրանաձին կայսր<sup>1</sup> խօսելով Տարօնի վրայ, կը գրէ թէ Գրիգորիկ, Տարօնի տէրը, կ'ենթարկէ ինքզինքը Լեւոն Զ. կայսեր (886—911): Ի սկզբան երկերես դեր կը խաղար. մէկ կողմէն կ'երեւցնէր ինքզինքը Յունաց բարեկամ, միւս կողմէն կը գործէր կայսեր հպտտակ թեմերու դէմ՝ առաջնորդ ծառայելով ասորական զօրքերուն: Քիչ յառաջ ձերբակալած էր ասիկա պատերազմի ժամանակ Արքայիկի որդիները, որոնք Աշոտ պրոտոսպարի հօր՝ Գրիգորիկի եղբորորդիներն էին: Սմբատ, որ նոյն ատեն իշխանաց իշխանն էր, անոնց ազատութեան համար դիմած էր կայսեր, որպէս զի միջնորդէ Գրիգորիկի քով: Կայսրը շատ անգամ հրաւիրած էր զինքը, որ Կ. Պոլիս դայ. ի վերջոյ զիջանելով Կոստանդինի, Լիբոսի որդւոյն խնդրանքին զայցած է մայրաքաղաք, ուր կը տրուի իրեն մաղխատրոս տխուղան էւ կ'անուանուի Տարօնի զօրավար (στρατηγός): Ասկէ ետքը երկրորդ անգամ մ'ալ կ'այցելէ Գրիգորիկ Կ. Պոլիս:

Գրիգորիկի որդին էր Բագարատ. իսկ Աշոտ անոր խորթ որդին կը նկատուէր: Հօրը մեռնելէն ետքը Բագարատ Կ. Պոլիս կու գայ, եւ կ'ընդունի պատրիկ եւ զօրավար Տարօնի տիրութենէրը. եւ Թէոփիլակոսոս մաղխատրոսի քրոջ հետ կ'ամուսնանայ:

Կ. Պոլիս կու գայ նաեւ Աշոտ՝ ընկերակցութեամբ Լիբոսի որդւոյն Կոստանդինի. կայսրը կը պատուէ զինքը Պրոտոսպար տիրութեամբ եւ կ'ուզարկէ Տարօն: Աշոտ երկրորդ անգամ կ'այցելէ Կ. Պոլիս Ռոմանոս կայսեր օրով եւ կը ստանայ պատրիկութիւն:

Երբ Ապուղամբի (Απογαύεμ) որդւոյն՝ Թոռնիկի մահէն ետքը կայսրը Կրենիտէսի ձեռքով յարքունիս կը գրաւէ Ապուղամբի հողերը, համաձայն Թոռնիկի կտակին, Գրիգորիկի որդիք Բագարատ եւ Աշոտ կ'առաջարկեն Կայսեր՝ Ապուղամբի հողերն իրենց ձգել եւ վտարելն ստանալ Ողնուտն (Ὀβλυστοχον): Այս առաջարկին կը հաւանի Կայսր եւ կը տիրանայ Ողնուտին: Այս պարագային ծանօթ է նաեւ Ասողիկ (183). «Ի ՆՓՆ (966) թուականին... վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին»: Այս Աշոտը կը յիշեն նաեւ արարացի պատմագիրք.

<sup>1</sup> De administr. imp. 43, էջ 182—189:

«Աշոտ որդի Գրիգորի իշխանաց իշխան եւ տէր Սասնոյ» յորջորջելով<sup>2</sup>:

Աշոտի որդիներէն կը յիշուին Գրիգոր եւ Բագարատ, որոնք 977ին Վարդ Սկիւրոսի բանակին մէջ կը ծառայէին. Ասողիկ (191) կը գրէ. «Վարդայ զինեալ ընդդէմ նորա (Վասիլ կայսեր) ի պատերազմ. յորում քաջապէս մարտուցեալ զօրն Հայոց, որպէս որդիք իշխանին Տարօնոյ՝ Գրիգոր եւ Բագարատ եւ Զափրանիկ իշխան Մոկացի, ահաբեկ արարեալ զգօրան Յունաց»: Եւ դարձեալ. 991ին Վասիլ կայսր «երթեալ պաշարէ զքաղաքն Վէսայ եւ առնու զնա եւ զմախտրոսն զԳրիգոր զորդի իշխանին Տարօնոյ զօրքն թողու անդէն ընդդէմ Բուլղարին»: Բուլղարները սահայն կը փորձեն յանկարծական յարձակմամբ մը յետս մղել Գրիգորի զօրքը. «որոց ընդդէմ եկեալ որդին Գրիգորոյ՝ պատանեակն Աշոտ, զոր ձերբակալ առնէին: Եւ ապա հօրն զկեանս ի վերայ եղեալ պատերազմաւ, մինչ ի նմին մեռանել ամենայն զօրքն<sup>3</sup>»:

Աշոտ, որ գերի ինկած էր Բուլղարացւոց ձեռքը, ազատ կ'արձակուի եւ կը փեսայանայ Բուլղարներու Սամուէլ ցարին: Եւ երբ ցարը կը յանձնէ իրեն Դիւռաքիոնի պահպանութիւնը՝ զաղտազողի կը զիմէ փախուտի, իսկ քաղաքը կը մատնէ Կայսեր: Իրբեւ վարձատրութիւն՝ զինքը մաղխատրոս կ'անուանէ Կայսրը<sup>4</sup>:

2. Ապուղամբ, Գրիգորիկի եղբայրը, որ Արքայիկի որդւոց հետ Կայսեր ներկայացած, պրոտոսպարի անուանուած եւ միւսանգամ հայրենիք ուղարկուած էր, վերստին Կ. Պոլիս կու գայ, պատրիկութեամբ կը պատուի եւ կ'ամուսնանայ Լիբոսի որդւոյն՝ Կոստանդինի աղջկան հետ: Երկիր զառնալէն քիչ յետոյ կը վախճանի: Իր միակ ժառանգն էր Թոռնիկ. սա իր հօրեղբոր Գրիգորիկի մահէն ետքը Կ. Պոլիս կայսեր կը ներկայանայ եւ պատրիկութեան կը բարձրանայ: Իր հօրեղբոր որդիներէն՝ Բագարատէն եւ Աշոտէն շատ նեղութիւններ կը կրէ. կը վախճանի կտակելով իւր հողերը Կայսեր: Իր կիսն եւ փոքրիկ զաւակը Կրենիտէս կը փոխադրէ Կ. Պոլիս:

Այսպէս Կոստանդին Միրանաձին:

3. Յ. Մարկուարտ Գրիգորիկն ու Ապուղամբը կը սերեցնէ Բագարատ Բագարատուն-

<sup>2</sup> Marquart, Südarmanien. 460 եւ 498:  
<sup>3</sup> Ասողիկ, 260—261: Հմմտ. եւ Կեղերեսոս: Բ., 447—449:  
<sup>4</sup> Կեղերեսոս, Բ., 449—451: Հմմտ. Marquart, անդ, 498—499:

ւոյ Տարօնի տիրոջ (Սողոմոն) որդիէն: Բայց պատմութենէն յայտնի չէ թէ Սողոմոն Բագարատունի (Թ. Արժր. 204) Բագարատի որդին ըլլայ եւ ոչ ալ թէ Գրիգորիկ եւ Ապուղամբ Սողոմոնի որդիքն են:

Այն պարագան որ Կրենիտէս Մամիկոնեան տէրն կ'ըլլայ Գրիգորիկի եւ Ապուղամբի թոռնիկներուն, եւ դարձեալ այն հանգամանքն որ Գրիգորիկի խորթ որդին Աշոտ Սասնոյ տէր կը ներկայանայ, իսկ Գրիգոր Մաղխատրոս Սասնոյ տէրը Մամիկոնեան կը ձանձնայ, կրնանք ասկէ հետեւցնել, թէ ասոնք՝ Գրիգորիկ եւ Ապուղամբ Մամիկոնեան եղած ըլլան եւ Տարօնի մէկ մասին տէրը, յանուանէ ծանօթ է թէ Ողնուտն Գրիգորիկի ձեռքն էր:

Այս նկատումով աւելի հաւանական կը թուի ինձ Գրիգորիկն նոյնացնել Վասակայ որդւոյն Գրիգորի հետ, զոր կը յիշէ Թովմաս Արժրունի (221), որուն համար կը գրէ պատմիչը, թէ «սա նմանապէս ողբուարձ իմաստութեամբ աուցեալ՝ հոյակապ եւ անուանի ի մէջ Հայկականացս եւ ցանկալի լսողաց եւ ուրախարար տեսողաց. սա առաւելաց յամենայն հոգածութիւնս ի զիւսոս իմաստութեան ուսումնասիրութեան եւ այլն ամենայնի՝ քան զհարս եւ զհաւս իւր»: Այլուր (278) խօսելով միւսանգամ իր մասին կը գրէ Թովմաս, թէ «ի սոյն աւուրս (905) զնոյն օրինակ ապստամբութեան բերեալ եւ Գրիգորի որդւոյ Վասակայ, որոյ Ապուղամբայն անուն ձանաչիւր, որ բռնեալ որջացեալ էր յիւրեան անուանեալ ամբողջ»: Անոր մէկ զուտորը կնութեան առած էր Գագիկ, այս պատճառաւ ալ Արուճ ամրոցը կը կործանէ միայն, իսկ «զժառանգութիւն իւրեանց գաւառին հաստատէ նոցա... բնակեալ (անդէն) աներկիւղ» (Արժր. 279): Այլուստ ծանօթ է թէ Արուճ Մամիկոնեանց կալուածքն էր (Ղեւոնդ, 15):

4. Ապուղամբի որդւոյն Թոռնիկ յորջորջումը կը հրաւիրէ իր վրայ ուշադրութիւն: Արդեօք իր մէջը պէտք չէ՞ փնտռել կապը Տայոց եւ Սասնոյ Թոռնիկեանց: Դժբախտաբար պատմութիւնը չէ պահած Թոռնիկի անհափազան որդւոյն անունը, զոր Կրենիտէս Մամիկոնեան տարած էր Կ. Պոլիս. անծանօթ կը մնայ մեզի նաեւ անոր բախտը: Սասուն կը գտնուի այժմ Կայսեր զրօշին տակ:

Ժ. դարու երկրորդ կէտին Սասնոյ տէր կը ներկայանայ՝